

# Մկննդի ժողովը



Exported from Wikisource on 06/24/18

## Մկների ժողովը

հեղինակ՝ [Խնկո Ապեր](#)

## Մկների ժողովը

Սով էր, սով էր մկստան,  
Կատվի ձեռքից լկստան  
Գգիրն ընկավ դռնեդո՛ւտ  
Էլ չթողեց տուն-կտուր  
Չահել ահել գեղովի,  
Կանչեց, բերեց ժողովի՝  
Թէ ինչ անեն, որ կատվեն  
Մի հնարքով ազատվեն:  
Եկան գյուղի ջոջերը  
Երկար բարակ պոչերը,  
Մասնակցեցին խորհրդին,  
Մի մուկ խոսեց իր հերթին,  
— Լսե՛ք, մկներ, ցեղակից,  
Չունեն որդի, կողակից,  
Ես մի անտեր ծերուկ եմ,  
Բայց պատվավոր մի մուկ եմ.  
Պակսեց ուժը իմ ոտի,  
Պէտք է մեռնեն անոթի  
Սովն է չոքել դռանը,  
Ախ, մռռանը, մռռանը,  
Վեր է ընկել, մառանը,  
Ինչքան ասես նազ անի,  
Ստից սատկի, տազ անի,  
Մուկ տեսնելիս, վազ անի,  
Գլխից բռնի, կախ անի,  
Թաթովը տա, խաղ անի,  
Ուտի, քեֆը չաղ անի,  
Էսպես գուլում ու կրակ,

Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:  
Բայց թե ազնիվ մեր ցեղը  
Կորչելու չէ գուր տեղը...  
Ա՛յ բերել եմ ես մի գանգ,  
    Ծափ, ծլնգոց,  
    Մեջը գնգոց.  
Կատվի վզից մենք կախ տանք,  
    Որ ինչքան էլ օրորա,  
    Որ ինչքան էլ շորորա,  
Ստից սատկի, տազ անի,  
Գալն իմանանք գազանի:  
Է՛, գանգը ո՞վ կախ անի.  
    — Ալո դո՛ւ:  
    — Ալո՞ն տանի:  
    — Բալո դո՛ւ :  
    — Բալո՞ն կախէ:  
    — Չստո, դո՛ւ:  
    — Չստոն կաղ է :  
    — Մստո, դո՛ւ:  
    — Մստոն կարճ է:  
    — Փստո, դո՛ւ:  
    — Էդ էլ խի՞ղճ է:  
    — Համբօ, դո՛ւ:  
    — Ես տկար եմ:  
    — Չամբո, դո՛ւ:  
    — Ասենք տարա,  
Բա որ կատուն գա ինձ վրա՞:  
    — Բտոն, Խտոն թող մեկից  
    Բոնեն կատվի քամակից:  
    — Ի՞նչ է խոսում չոր գանգը,  
    Լավ է դու տար էդ գանգը,  
    Էլ ի՞նչ Բտո, ի՞նչ Ֆստան,—  
    Ճստաց Բտոն ճստճստան:  
    — Լո՛ի՛, հանդուգն  
    Կոտորվե՛ք դուք,  
Վախկոտներիդ ես թաղեմ,  
Ճա՞ն ասեմ, թե՞ գանգ կախեմ,—  
    Գոչեց ջոջը,  
    Քաշեց պոջը:

---



# About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)<sup>[1]</sup>. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)<sup>[2]</sup> license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)<sup>[3]</sup>.

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)<sup>[4]</sup>.

The following users contributed to this book:

- GeoO

- 
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
  2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
  3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
  4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)